ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

9 հուլիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

90
(3299)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՆՈՐ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

Չնայած վերջին օրերին իշխանությանը հաջողվեց ստանալ այն քաղաքական եւ տեղեկատվական տեսարանները, որոնց երկար ժամանակ ձգտում էր՝ Գագիկ Ծառուկյանի առանձնատանը իրականացված խուզարկությունը, նրան գետնին տապալելու կադրերը, առանձնատնից առյուծների, վագրի եւ հարյուրավոր խրտվիլակների առգրավումը, Նիկոլ Փաշինյանը, մեր տեղեկություններով, շարունակում է խիստ դժգոհ մնալ իրավապահ համակարգի աշխատանքից:

«Ժողովուրդ» օրաթերթի կառավարական լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ վերջին շրջանի կուլիսային քննարկումների ընթացքում իրավապահ համակարգի գործունեությունը եղել է ամենաքննարկվող թեմաներից մեկը: Փաշինյանի գնահատմամբ՝ բարձր աղմուկ հանած գործողությունները չեն փոխարինում այն արդյունքներին, որոնք ինքը ակնկալում է նախաքննական եւ դատավարական գործընթացներից: Վարչապետը համարում է, որ իրավապահ համակարգը շարունակում է աշխատել դանդաղ, չի արդարացնում սպասելիքները, էլիտան շարունակում է ունենալ առավելություններ իրավապահ համակարգում, իսկ առանձին քրեական վարույթներով նախաքննության եւ դատական փուլերի միջեւ առկա ժամանակային ձգձգումները չեն համապատասխանում իր պատկերացումներին:

Կառավարական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ հենց այս դժգոհությունների ֆոնին իշխանության ներսում արդեն քննարկվում են նոր կադրային փոփոխություններ: Մասնավորապես, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, վարչապետ Նիկոլ Փաշինյանի նշանակետում են հայտնվել Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը, Քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը, Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Արթուր Աթաբեկյանը, ինչպես նաեւ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

Թեեւ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը նշանակման պահից, իշխանական շրջանակների գնահատմամբ, անում է հնարավորն ու անհնարը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վստահությունն ու աջակցությունը պահպանելու համար, իրավապահ համակարգում բոլորովին այլ գործընթաց է հասունանում: «Ժողովուրդ» օրաթերթի կառավարական եւ իրավապահ համակարգին մոտ կանգնած աղբյուրների փոխանցմամբ՝ վերջին ամիսներին վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատակազմում եւ իշխանական տարբեր օղակներում ակտիվորեն քննարկվում է Ազգային անվտանգության ծառայության քննչական մարմնի վերականգնման հարցը: Մեր տեղեկություններով՝ մասնագիտական շրջանակները շարունակ վարչապետին ներկայացնում են այն հիմնավորումը, որ տարիներ առաջ ընդունված որոշումը՝ ԱԱԾ-ի քննչական ստորաբաժանումը լուծարելու եւ դրա լիազորությունները Քննչական կոմիտեին փոխանցելու վերաբերյալ, գործնականում չի արդարացրել սպասելիքները: Ավելին, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը, ըստ էության, արդեն տվել է քաղաքական համաձայնությունը, որպեսզի գործընթացը սկսվի: Թե ինչ ժամկետներում այն կմտնի գործնական փուլ, առայժմ հստակ չէ, սակայն իշխանության ներսում նման սցենարն այլեւս բացառված չեն համարում:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում***



Գագիկ Ծառուկյանի կալանավորումից եւ նրա առանձնատանը շուրջ 13 ժամ տեւած խուզարկությունից հետո հանրային ուշադրության կենտրոնում հայտնվեցին ոչ միայն քրեական գործի մանրամասները, այլեւ այն կենդանիները, որոնք պահվում էին նրա բակում: ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտարարեց, որ առանձնատնից առգրավվել են տարբեր կենդանիների եւ թռչունների 190 հատ խրտվիլակ, ինչպես նաեւ 3 առյուծ եւ 1 վագր, որոնք ճանաչվել են որպես իրեղեն ապացույց եւ տեղափոխվել Կենդանաբանական այգի: «Ապօրինի որսի հետեւանքով շրջակա միջավայրին պատճառվել է 30 մլն ՀՀ դրամի վնաս: Գ.Ծ.-ի առանձնատանը պահվող մյուս կենդանիները նախատեսվում է առգրավել եւ պատասխանատու պահպանությանը հանձնել հաջորդող օրերին: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է»,- նշվում է հաղորդագրությունում: Երեկ վաղ առավոտից «Ժողովուրդ» օրաթերթը փորձել է Երեւանի քաղաքային իշխանություններից ստանալ թույլտվություն՝ այցելելու Երեւանի կենդանաբանական այգի եւ նկարահանում իրականացնելու՝ պարզելու, թե որտեղ եւ ինչ պայմաններում են պահվում Ծառուկյանի կենդանիները, ինչ վիճակում են գտնվում, արդյոք արդեն դուրս են եկել քնեցումից եւ ինչպես է ընթանում նրանց խնամքը: Սակայն Երեւանի քաղաքապետարանը համառորեն հրաժարվեց որեւէ կերպ ընդառաջել մեր խնդրանքին եւ հնարավորություն տալ հանրությանը ներկայացնելու կենդանիների պահման պայմանները:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում***

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ՀՀ ԱԺ հերթական ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո ՀՀ գլխավոր դատախազությունից ստացել էր պատգամավորի թեկնածուների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, որոշների դեպքում էլ՝ ազատությունից զրկելուն համաձայնություն տալու վերաբերյալ միջնորդություններ: Այդ միջնորդությունները ԿԸՀ-ն չէր քննել աշխատանքային ծանրաբեռնվածության՝ ՍԴ-ում ընտրությունների արդյունքների բողոքարկման հանգամանքով պայմանավորված: Հանձնաժողովը հուլիսի 8-ի հերթական նիստում որոշել է դրանք վերադարձնել ՀՀ գլխավոր դատախազություն: Ընտրական օրենսգրքով պատգամավորի թեկնածուների սահմանված իրավունքները եւ պարտականությունները պատգամավորի թեկնածուի վրա տարածվում են մինչեւ Ազգային Ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ մինչեւ Սահմանադրական դատարանի որոշում ընդունելը: Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները եւ պարտականությունները պատգամավորի թեկնածուի վրա տարածվել են մինչեւ 2026 թվականի հուլիսի 4-ը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասության շրջանակներից դուրս է պատգամավորի թեկնածուի կարգավիճակ չունեցող անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ ազատությունից զրկելուն համաձայնություն տալը:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ՄԵՆՔ ՎԱՂՈՒՑ ԷԻՆՔ ՍՊԱՍՈՒՄ ՆՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ»

**ArmLur.am-ը զրուցել է «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության նախագահ Սուրեն Սուրենյանցի հետ:**

**- Պարոն Սուրենյանց, խուզարկություններ են իրականացվում Գագիկ Ծառուկյանի առանձնատանը, ինչպես նաեւ մի շարք ընկերություններում: Ի՞նչ տեղեկություններ ունեք, եւ որքանո՞վ էր այս իրավիճակը սպասելի ձեզ համար:**

- Իշխանության հաղորդագրություններն ինձ համար հետաքրքիր չեն: Ինձ համար ակնհայտ է, որ այս ամենը կատարվում է Նիկոլ Փաշինյանի քաղաքական պատվերով: Կարծում եմ՝ նախընտրական քարոզարշավի ընթացքում հնչեցված սպառնալիքներից հետո իրավապահ մարմիններին հանձնարարական է տրվել ընդդիմության առաջնորդների դեմ ամեն գնով քրեական գործեր հարուցել: Այս ամենը լիովին տեղավորվում է այդ տրամաբանության մեջ: Արդեն ավելի քան երկու ամիս է՝ համակարգված արշավ է իրականացվում Գագիկ Ծառուկյանի եւ մեր քաղաքական թիմի դեմ, իսկ այժմ այդ գործընթացը հասել է իր կուլմինացիային: Իմ գնահատմամբ՝ երկրում հաստատվում է կայուն ավտորիտար համակարգ: Նման պայմաններում որեւէ քրեական գործի կամ իրավական հանգամանքի քննարկումը իմաստ չունի, քանի որ ամեն ինչ, մեր համոզմամբ, կատարվում է քաղաքական պատվերով:

**- Գագիկ Ծառուկյանի հետ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության որեւէ ներկայացուցիչ կապ հաստատե՞լ է:**

- Ես այդ մասին տեղեկություն չունեմ: Քիչ առաջ եմ եկել եւ անձամբ այսօր նրա հետ չեմ խոսել:

**- Իսկ երեկ անդրադարձե՞լ եք «Բարգավաճ Հայաստանի» շուրջ ծավալվող իրադարձություններին:**

- Այո՛, մենք գրեթե ամեն օր ենք շփվում եւ քննարկում քաղաքական իրավիճակը:

**- Իր համար այս զարգացումները սպասելի՞ էին:**

- Այո՛, որովհետեւ մենք վաղուց էինք սպասում նման քայլերի: Չէինք կարող ասել, թե դա երբ տեղի կունենա, բայց բոլորս էլ պատրաստ էինք ամենավատ սցենարին: Այդ պատճառով տեղի ունեցածը մեզ համար անակնկալ չէր:

*Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

## ԱՄՆ-Ի ՀԱՐՎԱԾՆԵՐԸ «ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ» ԷԻՆ

ԱՄՆ-ի կողմից Իրանին հասցված նոր հարվածները «միանգամայն անհրաժեշտ» էին: Այս մասին հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեն՝ Անկարայում ՆԱՏՕ-ի առաջնորդների գագաթնաժողովից առաջ լրագրողների հետ զրույցում:

Ինչպես հաղորդում է Reuters-ը, ԱՄՆ-ի զինված ուժերը երեքշաբթի օրը նոր հարվածների շարք են իրականացրել Իրանի դեմ, իսկ Վաշինգտոնը չեղարկել է Իրանի կողմից նավթի վաճառքը թույլատրող արտոնությունը: Այդ քայլերը հաջորդել են Հորմուզի նեղուցում երեք նավերի ուղղությամբ իրականացված հարձակումներին, որոնք լրացուցիչ լարվածություն են առաջացրել արդեն իսկ փխրուն հրադադարի պայմաններում:

«Երբ կա հրադադար, եւ Իրանը փաստացի խախտում է այն, կարծում եմ՝ չափազանց կարեւոր է, որ ԱՄՆ-ն ուժային արձագանք տա»,- լրագրողներին ասել է Մարկ Ռյուտեն:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը հայտարարել է, որ նման իրավիճակում Միացյալ Նահանգների արձագանքը անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով հրադադարի խախտումները:

Ռյուտեի հայտարարությունները հնչել են Անկարայում անցկացվող ՆԱՏՕ-ի առաջնորդների գագաթնաժողովի շրջանակում, որտեղ դաշնակից երկրների ղեկավարները քննարկում են նաեւ ԱՄՆ-ի եւ եվրոպական գործընկերների հարաբերությունները:

Նրա խոսքով՝ կասկած չկա, որ Միացյալ Նահանգները շարունակում է ամբողջությամբ հավատարիմ մնալ ՆԱՏՕ-ին: Միեւնույն ժամանակ Ռյուտեն նշել է, որ ակնկալվում է, որ եվրոպական երկրներն ու Կանադան կավելացնեն իրենց պաշտպանական ծախսերը՝ դրանք հավասարեցնելով ԱՄՆ-ի մակարդակին:

«Կարծում եմ՝ դա լիովին արդար պահանջ է»,- ասել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը:

Նա նաեւ նշել է, որ պաշտպանական ծախսերի ավելացումը «մեծ հաղթանակ» է, որը, ըստ նրա, պարտություն է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի համար եւ հաղթանակ՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի համար, քանի որ եվրոպական երկրներն ու Կանադան գնում են այդ ուղղությամբ:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

## ԵՄ-Ն ՔՆՆԱՐԿՈՒՄ Է

Եվրոպական միությունը Հայաստանի ու Ադրբեջանի իշխանությունների հետ քննարկում է, թե ինչպես կարող է Բրյուսելը լավագույնս աջակցել Հարավային Կովկասի հաղորդակցային երթուղիների զարգացմանը:

Այս մասին Երեւանում լրագրողների հետ ճեպազրույցում ասաց Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոն՝ խոսելով Հարավային Կովկասում անվտանգության իրավիճակի ու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատման գործընթացի շուրջ:

«Տարածաշրջանում կայուն խաղաղության կառուցման առաջընթացը աներեւակայելի տպավորիչ է եղել, եւ իհարկե, մենք, որպես Եվրոպական միություն, ձգտում ենք լինել ամուր գործընկերներ Հայաստանի Հանրապետության, բայց նաեւ՝ Ադրբեջանի համար, որպեսզի այդ խաղաղությունը դառնա կայուն իրականություն, որն օգուտ կբերի բոլոր մարդկանց»,-շեշտեց Գրոնոն:

ԵՄ հատուկ ներկայացուցիչը նաեւ ընդգծեց, որ Բրյուսելը տարբեր միջոցներով եւ ձեւերով աջակցում է Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացին:

«Իհարկե, կա քաղաքական աջակցություն Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարություններին, քանի որ նրանք առաջ են տանում խաղաղության գործընթացը, բայց կան նաեւ ջանքեր՝ աջակցելու առանձին ուղղություններին, որտեղ քննարկումները շարունակվում են, որոնք կարող են օգուտ բերել երկու կողմերի մարդկանց: Այսպիսով, մենք, իհարկե, որպես դրա մաս, դիտարկում ենք, թե ինչպես կարող ենք լավագույնս աջակցել նաեւ մարդասիրական հարցերին, եւ այդ առումով՝ ականազերծումը գլխավորն է: Այն կարող է ազդեցություն ունենալ անմիջականորեն տուժած համայնքների վրա: Կարող է նաեւ կարեւոր ազդեցություն ունենալ, եթե կապի օրակարգի եւ տարածաշրջանի ավելի լայն ապաշրջափակման մասին, քանի որ կառուցվում են նոր տարանցիկ գծեր»,-նշեց ԵՄ հատուկ ներկայացուցիչն՝ անդրադարձ կատարելով այսօր Հայաստան հասած ժամանակակից ականազերծման մեքենային, որը նվիրաբերվել է Եվրոպական միության կողմից:

Գրոնոն կրկին շեշտեց՝ տարածաշրջանային կապի եւ Հարավային Կովկասի ավելի լայն ապաշրջափակման օրակարգը նույնպես ԵՄ ուշադրության կենտրոնում է:

«Մենք քննարկում ենք Հայաստանի իշխանությունների, բայց նաեւ, իհարկե, Ադրբեջանի գործընկերների հետ, թե ինչպես լավագույնս աջակցել այս երթուղիների զարգացմանը, որպեսզի բոլոր երկրները ներգրավված լինեն, այդ երթուղու երկայնքով տեղակայված համայնքների բոլոր բնակիչներն օգտվեն դրանից, եւ, իհարկե, մենք զգալի ներդրում ունենանք այն բանում, ինչը ԵՄ-ի համար առաջնահերթություն է. խոսքը «Միջին միջանցք»-ի հաղորդակցային նախագծի մասին է, որը Ասիան Հարավային Կովկասով կապում է Եվրոպային»,-ընդգծեց Մագդալենա Գրոնոն:

## ԱՐՁԱԿՈՒՐԴ ԿԳՆԱՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել արդարադատության նախարար Սրբուհի Գալյանին ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին: Վարչապետի N 613-Ա որոշման համաձայն՝ Սրբուհի Գալյանին կտրամադրվի 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը՝ 10 աշխատանքային օր տեւողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 13-24-ը ներառյալ: Որոշմամբ սահմանվել է նաեւ, որ նախարարի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում՝ 2026 թվականի հուլիսի 13-16-ը ներառյալ, նրան կփոխարինի արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Դադունցը, իսկ հուլիսի 17-24-ն ընկած ժամանակահատվածում՝ արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանը: Որոշումը ստորագրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին: Վարչապետի N 612-Ա որոշման համաձայն՝ Ժաննա Անդրեասյանին կտրամադրվի 2022-2023 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը՝ 3 աշխատանքային օր տեւողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 13-15-ը ներառյալ: Որոշմամբ սահմանվել է նաեւ, որ նախարարի արձակուրդի ընթացքում նրան կփոխարինի ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը: Որոշումը ստորագրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այն հաստատվել է 2026 թվականի հուլիսի 7-ին՝ էլեկտրոնային ստորագրությամբ:

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ ՄՈՏ Է

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության համաձայնագրի ստորագրումը մոտ է, եւ դա կարեւոր նշանակություն ունի տարածաշրջանի համար: Այս մասին հայտարարել է Հորդանանի փոխվարչապետ, արտաքին գործերի եւ արտերկրում բնակվող հորդանանցիների հարցերով նախարար Այման աս-Սաֆադին:

Ինչպես հայտնում է ադրբեջանական APA լրատվական գործակալությունը, Հորդանանի ԱԳ նախարարը հայտարարությունն արել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի հետ համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում:

«Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության համաձայնագիրը մոտ է ստորագրմանը, եւ դա մեծ նշանակություն ունի տարածաշրջանի համար: Այս կապակցությամբ մենք շնորհավորում ենք Ադրբեջանին»,- ասել է Այման աս-Սաֆադին:

Նշվում է, որ հայտարարությունը հնչել է Ադրբեջանի եւ Հորդանանի արտաքին գործերի նախարարությունների միջեւ անցկացված քաղաքական խորհրդակցություններից հետո:

*Ա. Վ.*

## ԻՐԱՎԻՃԱԿ

# ԹՐԱՄՓԸ ԴԺԳՈՀԵԼ Է ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻՑ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում մեկնարկած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի առաջին օրը կոշտ հայտարարություններով է հանդես եկել՝ քննադատելով դաշինքի եվրոպացի անդամներին եւ հայտարարելով, որ «շատ հիասթափված է ՆԱՏՕ-ից»:

Թրամփը լրագրողների հետ համատեղ ասուլիսում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ նշել է, որ եթե գագաթնաժողովը չանցկացվեր Թուրքիայում, հնարավոր է՝ ինքը նույնիսկ չմասնակցեր դրան:

«Եթե գագաթնաժողովը չանցկացվեր Թուրքիայում, որտեղ իմ ընկերը՝ շատ ուժեղ առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդողանն է, հնարավոր է՝ես ընդհանրապես չգայի»,- ասել է ԱՄՆ նախագահը:

Նա նաեւ դժգոհել է, որ Եվրոպայի մի շարք երկրներ բավարար աջակցություն չեն ցուցաբերել ԱՄՆ-ին Իրանի շուրջ վերջին հակամարտության ընթացքում:

«Մենք հարյուրավոր միլիարդավոր դոլարներ ենք ծախսում, բայց նրանք մեր կողքին չեն կանգնում: Մենք միշտ եղել ենք նրանց կողքին, իսկ նրանք՝ ոչ: Իտալիան, Գերմանիան եւ Ֆրանսիան մեզ մերժեցին»,- հայտարարել է Թրամփը:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ նախագահը բարձր է գնահատել Վաշինգտոնի եւ Անկարայի հարաբերությունները: Նա հայտարարել է, որ մտադիր է վերացնել Թուրքիայի նկատմամբ գործող պատժամիջոցները եւ շուտով որոշում կկայացնի Անկարային F-35 կործանիչների հնարավոր վաճառքի վերաբերյալ:

ՆԱՏՕ-ի այս տարվա գագաթնաժողովի գլխավոր թեմաներից մեկը պաշտպանական ծախսերի ավելացումն է: Թրամփի շարունակական ճնշման ներքո դաշինքի անդամ երկրները պարտավորվել են պաշտպանության հիմնական ոլորտում ծախսերը հասցնել ՀՆԱ-ի 3,5 տոկոսի, ինչպես նաեւ լրացուցիչ 1,5 տոկոս հատկացնել կիբեռանվտանգությանը եւ պաշտպանությանը վերաբերող այլ ծրագրերին:

Սակայն ՆԱՏՕ-ի հրապարակած վերջին տվյալների համաձայն՝ 2026 թվականին դաշինքի 32 անդամներիցմիայն հինգն են ակնկալվում, որ կհասնեն պաշտպանության հիմնական ծախսերի՝ ՀՆԱ-ի 3,5 տոկոսի նպատակային ցուցանիշին:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեն գագաթնաժողովից առաջ հայտարարել է, որ անդամ երկրներից ակնկալում է «հստակ, կոնկրետ եւ վստահելի ծրագրեր» պաշտպանական ծախսերի ավելացման ուղղությամբ: Նրա խոսքով՝ Ռուսաստանը, Չինաստանը, Հյուսիսային Կորեան եւ Իրանը շարունակում են անվտանգության լուրջ մարտահրավերներ ներկայացնել, իսկ Ռուսաստանի ռազմական արդյունաբերությունը շուրջօրյա աշխատում է Ուկրաինայի դեմ պատերազմի կարիքները բավարարելու համար:

ՆԱՏՕ-ի երկօրյա գագաթնաժողովը շարունակվում է Անկարայում, իսկ առաջնորդների հիմնական լիագումար նիստը նախատեսված է հուլիսի 8-ին:

*Ա. Վ.*

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԱՇԽՎԵԼՈՒ

# ԴՈՆԹԻ ԲԱՆԱՁԵՎԸ, ԹՎԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

**Նոր ձեւավորվող Ազգային Ժողովում առաջին լուրջ քաղաքական դիմակայությունը լինելու է խորհրդարանի ղեկավար մարմինների ձեւավորման շուրջ: Խոսքը մշտական հանձնաժողովների նախագահների, ինչպես նաեւ Ազգային Ժողովի ղեկավար պաշտոնների բաշխման մասին է:**

ArmLur.am-ը ուսումնասիրել է շատերի համար անհասկանալի մեթոդը, թե ինչ սկզբունքով են որոշվում, թե որ քաղաքական ուժը քանի հանձնաժողովի նախագահի պաշտոն կարող է ստանալ նոր խորհրդարանում: Իրականում այդ բաշխումը կատարվում է ոչ թե քաղաքական պայմանավորվածությամբ, այլ Դոնթի (D'Hondt) համամասնական մեթոդով, որը սահմանված է խորհրդարանական պաշտոնների համամասնական բաշխման համար:

### *Ի՞նչ է Դոնթի մեթոդը*

Դոնթի բանաձեւի հիմքում բավական պարզ տրամաբանություն է:

Յուրաքանչյուր քաղաքական ուժի ստացած մանդատների թիվը հերթականությամբ բաժանվում է 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի եւ այդպես շարունակ: Ստացված ամենամեծ գործակիցները հերթով ստանում են բաշխվող պաշտոնները, մինչեւ սպառվեն բոլոր պաշտոնները:

Այս դեպքում հաշվարկի հիմքում ընկած են արդեն ձեւավորված Ազգային Ժողովի մանդատները.

ՔՊ - 64 մանդատ

«Ուժեղ Հայաստան» - 29 մանդատ

«Հայաստան» դաշինք - 10 մանդատ

Քանի որ Ազգային Ժողովն ունի 12 մշտական հանձնաժողով, ապա հաշվարկը կատարվում է հենց 12 պաշտոնի համար:

### *Դոնթի հաշվարկը*

| Հերթականություն | ՔՊ | Ուժեղ Հայաստան | Հայաստան | Պաշտոնը ստանում է |
|---|---|---|---|---|
| 1 | **64** | 29 | 10 | ՔՊ |
| 2 | **32** | 29 | 10 | ՔՊ |
| 3 | 21.33 | **29** | 10 | Ուժեղ Հայաստան |
| 4 | **21.33** | 14.5 | 10 | ՔՊ |
| 5 | **16** | 14.5 | 10 | ՔՊ |
| 6 | 12.8 | **14.5** | 10 | Ուժեղ Հայաստան |
| 7 | **12.8** | 9.67 | 10 | ՔՊ |
| 8 | **10.67** | 9.67 | 10 | ՔՊ |
| 9 | 9.14 | 9.67 | **10** | Հայաստան |
| 10 | 9.14 | **9.67** | 5 | Ուժեղ Հայաստան |
| 11 | **9.14** | 7.25 | 5 | ՔՊ |
| 12 | **8** | 7.25 | 5 | ՔՊ |

### *Ի՞նչ կստացվի արդյունքում*

Եթե պաշտոնները բաշխվեն բացառապես Դոնթի մեթոդով, ապա մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները կբաշխվեն հետեւյալ կերպ.

| Քաղաքական ուժ | Հանձնաժողովի նախագահի պաշտոն |
|---|---|
| Քաղաքացիական պայմանագիր | **8** |
| Ուժեղ Հայաստան | **3** |
| Հայաստան դաշինք | **1** |

Այսինքն՝ ընդդիմությունը ընդհանուր առմամբ կունենա 4 հանձնաժողովի նախագահի պաշտոն, որոնցից երեքը բաժին կհասնեն «Ուժեղ Հայաստան» խմբակցությանը, մեկը՝ «Հայաստան» դաշինքին:

Բայց միայն Դոնթի հաշվարկը բավարար չէ:

Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքով, Դոնթի հաշվարկից հետո սկսվում է քաղաքական ամենահետաքրքիր փուլը: Քաղաքական ուժերը հերթականությամբ ԱԺ բաց նիստում հայտարարում են, թե իրենց հասանելիք հերթական ընտրությամբ որ մշտական հանձնաժողովն են նախընտրում ղեկավարել:

Սա նշանակում է, որ սկզբում ընտրություն կատարելու առավելություն ունի այն քաղաքական ուժը, որը ստացել է առաջին իրավունքը Դոնթի հաշվարկով, ապա հաջորդը, եւ այդպես շարունակ, մինչեւ սպառվեն բոլոր 12 հանձնաժողովները:

Այստեղ արդեն սկսվում են քաղաքական հրապարակային բանակցությունները, որի սկիզբը տալու է ՔՊ-ն, քանի որ ունի շատ ձայներ: Որեւէ քաղաքական ուժ կարող է նախընտրել, օրինակ, Պաշտպանության եւ անվտանգության, Պետաիրավական, Արտաքին հարաբերությունների կամ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի հանձնաժողովները, որոնք ավանդաբար համարվում են ամենաազդեցիկներից: Մյուսները կարող են առաջնահերթ համարել, Տնտեսական, Մարդու իրավունքների պաշտպանության, Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի կամ այլ հանձնաժողովներ:

Այդ պատճառով մինչեւ քաղաքական ուժերը չհայտարարեն իրենց ընտրության մասին, հնարավոր չէ կանխատեսել, թե կոնկրետ որ հանձնաժողովը կհայտնվի որ խմբակցության ղեկավարության ներքո:

### *Թեժ քաղաքական պայքարը դեռ առջեւում է*

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հենց հանձնաժողովների նախագահների եւ Ազգային Ժողովի փոխնախագահների պաշտոնների շուրջ են սպասվում առաջին լուրջ քաղաքական բախումները նոր խորհրդարանում: Բանն այն է, որ 2021-ի ընտրություններից հետո ընդդիմության թեկնածուներին մի քանի անգամ չընտրեցին. ԱԺ փոխխոսնակի դեպքում Իշխան Սաղաթելյանին, իսկ հանձնաժողովի փոխնախագահներից՝ Արթուր Ղազինյանին մեկ տասնյակից ավել անգամ մերժեցին:

Այսպիսով, թեեւ Դոնթի բանաձեւը հստակ որոշում է յուրաքանչյուր քաղաքական ուժի բաժին հասնող պաշտոնների քանակը, բայց ՔՊ-ն կարճ ժամանակ հետո կարող է գահընկեց անել բոլոր ընդդիմադիրներին եւ միահեծան կառավարել ժողովրդավարական երկրի պառլամենտը, ինչպիսին այսօր է. ՔՊ խորհրդարան:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

# ՀԱՋՈՂՎԵԼ Է ՄԱՐԵԼ 50 ՄԼՆ-Ի ՎԱՐԿ

ՀԷՑ ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը սոցցանցի իր էջում նոր հրապարակում է արել՝ ՀԷՑ-ի վարկային պարտավորությունների վերաբերյալ: «Ուղիղ եւ պատասխանատու հայտարարում եմ. ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարման առաջին 6-8 ամիսներին մեզ հաջողվել է ՀԷՑ-ի ունեցած՝ գրեթե 400մլն ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական պարտավորություններից վաղաժամկետ ու պլանային մարել շուրջ 50մլն ԱՄՆ դոլարին համարժեք վարկեր, քանի որ սեփականատերերին եւ նրանց ուղղակի կամ անուղղակի փոխկապակցված շրջանակներին չի հաջողվել այլեւս ֆինանսական մի շարք առերեւույթ մեքենայությունների, ուռճացված գներով ապրանքների ու ծառայությունների ձեռքբերումների, բացառապես իրենց ու իրենց մերձավորներին պատկանող այլ ընկերությունների միջոցով տարիներ շարունակ իրականացվող «մենաշնորհային» մատակարարումների միջոցով «դուրս բերել» այդ $ 50,0մլն-ը ՀԷՑ-ից եւ «յուրացնել»...

ՀԷՑ-ի՝ օրվա սեփականատիրոջ կողմից նախօրեին ՀԷՑ-ի վերաբերյալ հնչեցված մի շարք մերկապարանոց, մտացածին ու անհիմն գնահատականներին կանդրադառնամ ավելի ուշ՝ կոնկրետ թվերով ու փաստերով»,- ասվում է գրառման մեջ:

ԴԱՏԱՐԱՆԻ ԱԴՄՈՒԿԸ

# ՀԱՅՀՈՅԱՆՔՆԵՐ, ՔԱՇՔՇՈՒԿ, ԳՈՒՅՔԻ ՎՆԱՍՈՒՄ

**2025 թվականին Աբովյանում սպանված 24-ամյա Մարգիս Զեյնալյանի հարազատների դեմ հարուցված քրեական գործով նախաքննության ավարտ է հայտարարվել:**

Հայտնել էինք, որ 2025 թվականին Աբովյանում 24-ամյա երիտասարդ էր սպանվել: Արդյունքում դատարանում վերջինիս հարազատները սպանության գործով կալանավորվածների հետ վիճել էին, եւ կարգադրիչները վնասվածքներ էին ստացել, ինչի հետեւանքով հարուցվել էր քրեական գործ:

Եւ ահա երեկ ՀՀ քննչական կոմիտեն հայտնեց, որ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2026 թվականի ապրիլի 1-ին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Չարենցավանի նստավայրում, դատական նիստի ընդմիջման ժամանակ, տուժողի ներկայացուցիչները եւ մեղադրյալները դրսեւորել են անհարգալից, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք, քաշքշել եւ հայհոյանքներ են հնչեցրել միմյանց հասցեին, վնասել են դատարանի գույքը՝ խաթարելով դատական նիստի բնականոն ընթացքը:

Նշված միջադեպի ժամանակ մարմնական վնասվածք է ստացել դատական նիստի ընթացքում ծառայություն իրականացնող կարգադրիչը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում հսկող դատախազի որոշմամբ 18 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (խուլիգանությունը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

## ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Մ.Ա.-ն հանդիսանալով «Ուժեղ Հայաստան»-ի վստահված անձ եւ գտնվելով 25/20 ընտրատեղամասի բակում, գործելով ընտրողների կողմից իրենց ընտրական իրավունքն ազատ եւ անկախ իրականացնելու գործընթացին միջամտելու, նրանց կամարտահայտության վրա ներգործելու ուղղակի դիտավորությամբ, հունիսի 7-ին ընտրատեղամաս ժամանած ընտրողներին հորդորել եւ ուղղորդել է քվեարկել «Ուժեղ Հայաստան» դաշինքի օգտին:

Մ.Ա.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով (ընտրությանը մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացմանը խոչընդոտելը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

## ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության հայցն ընդդեմ «Բեղլու» ՓԲԸ-ի, Պետական գույքի կառավարման կոմիտեի, Գագիկ Ծառուկյանի, «Մուլտի գրուպ» կոնցեռն ՍՊԸ-ի, «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ)՝ 1996 թվականի նոյեմբերի 29-ի N 111-2 պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին:

Որպես հետեւանք՝ Գլխավոր դատախազությունը պահանջում է անվավեր ճանաչել՝

1,21 հա մակերեսով հողատարածքի եւ 60 քմ մակերեսով N 7 փայտե տնակի մասով պայմանագրի հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը,

2000 թվականի սեպտեմբերի 8-ին «-Բեղլու» ՓԲԸ-ի եւ Գագիկ Ծառուկյանի միջեւ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը,

Վերոնշյալ պայմանագիրը փոփոխելու մասին 2001 թվականի հունվարի 12-ի համաձայնագիրը,

2025 թվականի նոյեմբերի 25-ին գրանցամատյանի N 4462 համարի ներքո ՊՈԱԿ-ի եւ «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի միջեւ կնքված վարձակալության պայմանագիրն ու 2025 թվականի նոյեմբերի 28-ին կատարված իրավունքի պետական գրանցումը:

Արդյունքում՝ «Մուլտի գրուպ» կոնցեռն ՍՊԸ-ի ապօրինի տիրապետությունից ՀՀ սեփականությանը վերադարձնել 0,29114 հա մակերեսով հողատարածքը, հողատարածքի վրա կառուցված շենքերը, շինությունները, այն է՝ 425,12 քմ մակերեսով բնակելի տները, 23,04 քմ մակերեսով նավակայանը, 100,8 քմ մակերեսով պարիսպը:

Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է Դատախազության՝ հայցի ապահովման միջոց կիրառելու պահանջը. պատասխանողին արգելվել է այնպիսի գործողություններ կատարելը, որոնք կհանգեցնեն հայցադիմումի մեջ նշված գույքերի սեփականատիրոջ փոփոխությանը կամ դրանց փաստացի վիճակի փոփոխությանը:

ԼՈՒՐԵՐ

## ԵՎՍ ՄԵԿ ԱՆՁ Է ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի դեմ հարուցված քրեական գործով մեկ անձ կալանավորվել է, եւս մեկը՝ ձերբակալվել: ArmLur.am-ին հայտնի է նրանց ինքնությունը: Մասնավորապես, քրեական գործով անցնում են գործով ներկայացված ընկերության տնօրեններ Համլետ Թումանյանը եւ Ռոմա Կարապետյանը:

Հիշեցնենք, որ Քննչական կոմիտեն հայտնել էր, որ Գագիկ Ծառուկյանի գործով եւս մեկ անձ է կալանավորվել, եւս մեկն էլ ձերբակալվել է: Նախօրեին ՔԿ-ից տեղեկացրել էին, որ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Գագիկ Ծառուկյանի կազմակերպմամբ մի շարք անձինք 2022-2024 թվականների ընթացքում առերեւույթ կատարել են առանձնապես խոշոր չափերով խարդախություն եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում: Գագիկ Ծառուկյանը եւ հանցավոր խմբի եւս մեկ անդամ ձերբակալվել էին, մյուս անդամի վերաբերյալ կայացվել էր ձերբակալման որոշում: Երեկ Գագիկ Ծառուկյանը կալանավորվեց երկու ամսով:

*Ք. Մ.*

## ԹՄՐԱՄԻՋՈՑ ՊԱՀԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

Հուլիսի 6-ի գիշերը՝ ժամը 3.30-ին, մայրաքաղաքի Ռուբինյանց փողոցում թմրանյութ ապօրինի ձեռք բերելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին են տեղափոխել Գրիբոյեդովի փողոցի բնակիչ 45-ամյա մի տղամարդու: Նրա մոտ հայտնաբերվել է դեղնականաչավուն զանգվածով փաթեթ: Տղամարդը հայտնել է, թե մարիխուանա տեսակի թմրամիջոցը 30 դոլարով ձեռք է բերել տելեգրամյան ալիքի միջոցով՝ անձնական օգտագործման համար:

***

Հուլիսի 6-ի առավոտյան՝ ժամը 4.35-ին, մայրաքաղաքում ծառայություն իրականացնող պարեկները, թմրանյութ ապօրինի պահելու եւ օգտագործելու կասկածանքով, Թամանցիների փողոցում ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին են տեղափոխել Աբովյան քաղաքի բնակիչ 65-ամյա տղամարդու: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել է դեղնականաչավուն զանգվածով փաթեթ եւ նույն զանգվածով կաթուցիչ:

***

Հուլիսի 6-ի կեսօրին Գեղարքունիքի պարեկները Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհի 57 կմ հատվածում, ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու հիմնավոր կասկածով ձերբակալել ու Համայնքային ոստիկանության Սեւանի բաժին են տեղափոխել «Նիսան» ավտոմեքենայի ուղեւոր 30-ամյա երիտասարդի: Մայրաքաղաքի Սարի թաղի բնակիչը ներկայացրել է կիսամոխրացած հետքերով կաթուցիչ՝ լցված դեղնականաչավուն զանգվածով: Ըստ նրա՝ դեղնականաչավուն զանգվածը ինքն է քաղել վայրաճ կանեփի բույսից եւ պահել անձնական օգտագործման համար:

***

Նույն օրը՝ ժամը 17.35-ին, Գեղարքունիքի պարեկները նույն ճանապարհին ձերբակալել եւ Սեւանի բաժին են տեղափոխել «Մերսեդես» մակնիշի մի մեքենայի ուղեւոր 28-ամյա երիտասարդի: Երեւանի Սեբաստիայի փողոցի բնակչի խուզարկությամբ՝ ձեռքի պայուսակում հայտնաբերվել է կիսամոխրացած հետքերով կաթուցիչ եւ դեղնականաչավուն զանգված: Նա հայտնել է, թե կանեփն ինքն է քաղել վայրաճ կանեփի թփերից եւ պատրաստել թմրանյութ՝ անձամբ օգտագործելու համար:

Բոլոր դեպքերով կազմված փաստաթղթերն ուղարկվել են քննչական բաժին:

## ՀԱՅՑԸ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է

Կոտայքի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, 2025 թվականի սեպտեմբերի 15-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Աբովյան համայնքի եւ ֆիզիկական անձի՝ հողամասի աճուրդն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջներով:

Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի հունիսի 29-ի վճռով բավարարել է Կոտայքի մարզի դատախազության հայցը: Վճռով անվավեր է ճանաչվել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ զբոսայգի հանդիսացող 916,6 քմ մակերեսով հողամասի 2018 թվականի մայիսի 18-ի աճուրդը: Որպես աճուրդի անվավերության հետեւանք, ի թիվս այլնի, անվավեր է ճանաչվել նաեւ հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, Կոտայքի մարզի Աբովյան համայնքին կվերադարձվի 916,6 քմ մակերեսով, շուրջ 80 միլիոն դրամ շուկայական արժեքով հողատարածքը:

● *Անցած 3 օրում գրանցվել է 46 ավտովթար. 1 մարդ մահացել է, 70-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՄԱՐԶ

## ՏԱՎՈՒՇՈՒՄ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ ՉԵՆ ՏՆԱՎՈՐԵԼ

2025թ. օգոստոսի 18-ին իր տեսաուղերձում վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնավորապես հայտարարել է. «Ղարաբաղից տեղահանված մեր հայրենակիցների ապագայի մասին մեր պատկերացումը հետեւյալն է. նրանք մեր եւ միջազգային հանրության աջակցությամբ պետք է տնավորվեն Հայաստանի Հանրապետությունում եւ այստեղ ապրեն, ստեղծագործեն, հաստատվեն՝ որպես Հայաստանի Հանրապետության լիարժեք քաղաքացիներ»: 2023թ.-ին բռնագաղթված արցախցիները ինչպե՞ս են տնավորվել Տավուշի մարզում, Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, Ն. Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը ի՞նչ աշխատանքներ է կատարել Արցախից բռնագաղթած, Տավուշի մարզում հաստատված արցախցիներին աշխատանքով ապահովելու, նրանց համար կենցաղային նորմալ պայմաններ ստեղծելու, արցախցիներին տնավորելու համար: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ 2023 թվականի աշնանը Արցախից բռնագաղթած մեր հայրենակիցներից 780 ընտանիք՝ 2970 անձ, բնակություն է հաստատել Տավուշում: Տավուշի մարզպետի աշխատակազմի տվյալներով՝ 2023թ. սեպտեմբերից հետո, անցած 2 տարի եւ 10 ամիսների ընթացքում Տավուշում հաստատված 780 ընտանիքներից ներկայումս Տավուշի բնակավայրերում ապրում է 525 ընտանիք, 255 ընտանիք հեռացել է Տավուշի մարզից: 2023 թվականին Տավուշի մարզում բնակություն հաստատած 2970 անձանցից այժմ մարզում մնացել է 1848-ը, 1122 անձ հեռացել է Տավուշից:

Վիճակն առավել վատ է արցախցիներին տնավորելու, բնակարաններով ապահովելու գործում: Հունիսի 26-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե Տավուշի մարզում հաստատված արցախցի քանի՞ ընտանիք է բնակարանային ապահովման պետական ծրագրով Տավուշում բնակարան ձեռք բերել, մարզի որ համայնքում՝ արցախցի քանի ընտանիք: Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արմեն Գեւորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել համապատասխան պետական լիազոր մարմնին»: Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի՝ Տավուշի մարզպետը, նրա գլխավորած աշխատակազմը պարտավոր են լրագրողիս հայտնել, թե Արցախից բռնագաղթած, Տավուշի մարզում հաստատված ընտանիքներին բնակարանային ապահովման պետական ծրագրով բնակարաններով ապահովելու խնդրով որն է համապատասխան լիազոր մարմինը: Եթե Տավուշի մարզպետն ու իր աշխատակազմն այդ կարեւոր խնդրի մասին տեղեկատվություն չունեն, ինչո՞ւ են իրենց անտեղյակության, վատ աշխատանքի համար ՀՀ պետական բյուջեից մեծ աշխատավարձեր եւ տարեկան շուրջ 65 միլիոն դրամ պարգեւավճարներ ստանում:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

ՎԱՐԴԵՆԻՍ

# ԱՆՎԱՆԱԿՈՉՎԵՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ՀԵԲՈՅԻ ԱՆՈՒՆՈՎ

**Վարդենիսում հարգանքի եւ երախտագիտության հերթական դրսեւորումն էր. հուլիսի 4-ին քաղաքի փողոցներից մեկը պաշտոնապես անվանակոչվեց ազատամարտիկ Գառնիկ Խչեյանի՝ բոլորին առավել հայտնի Հեբոյի անունով: Փողոցի անվանակոչումը ոչ միայն հիշատակի, այլեւ սերունդներին փոխանցվող պատգամի խորհրդանիշ դարձավ:**

Գառնիկ Խչեյանը ծնվել է Վարդենիսում: Իր կյանքի ամենակարեւոր առաքելությունը համարել է հայրենիքի պաշտպանությունը՝ մասնակցելով Արցախյան ազատամարտին, ինչպես նաեւ Վարդենիսի եւ Կիրանցի պաշտպանական գործողություններին: Նրա անունը մարտական ընկերների եւ հարազատների հիշողություններում այսօր էլ ասոցացվում է խիզախության, անձնազոհության եւ հայրենասիրության հետ:

Հուզիչ հիշողություններով կիսվում է Հեբոյի որդին՝ Արմեն Խչեյանը: Նա պատմում է, որ Քարվաճառի ազատագրման գործողության ծրագիրը մշակվել է հենց իրենց տանը, երբ ինքը դեռ ընդամենը տասը տարեկան էր: Այդ օրերի պատկերները մինչեւ այսօր վառ են իր հիշողության մեջ:

«Պապան, Խաչատուրովը ու էլի զինվորականների հետ եկել էին մեր տուն, մամայից սուրճ խնդրեցին: Մաման պատրաստեց բերեց ու ասացին՝ դուրս եկեք: Հետո, երբ արդեն քննարկեցին, ավարտեցին, դուրս գալիս Խաչատուրովը շնորհակալություն հայտնեց ու ասաց՝ Քարվաճառում, ասում են, տաք ջուր կա, մաման հաստատեց: Խաչատուրովն էլ ասաց՝դե կփորձենք: Հետո, երբ պապան գնաց, մենք իմացանք, որ Քարվաճառի ազատագրման պլանն էին գծում»,- պատմեց որդին:

Արմեն Խչեյանն առանձնահատուկ ցավով ու հպարտությամբ էր խոսում հոր մասին, հոր՝ հայրենիքի նվիրվածության, ինչը լավագույնս բնութագրում է այն, որ 1992 թվականի հուլիսի 23-ին՝ իր դստեր ծննդյան օրը, Հեբոն տուն չի վերադարձել: Անձնական մեծագույն ուրախությունից վեր նա դասել է հայրենիքի ազատագրության գործը՝ շարունակելով մնալ մարտական դիրքերում: Նրա մարտական ընկերներն էլ ընդգծում են, որ Հեբոն այն մարդկանցից էր, որոնք երբեք չէին խուսափում ամենավտանգավոր առաջադրանքներից եւ առաջիններից էին կանգնում մարտի ամենաթեժ կետերում:

Ազատամարտիկ Գառնիկ Խչեյանը ծնվել է 1956 թվականին: 1988-ից մասնակցել է Արցախյան ազատամարտին՝ իր իսկ նախաձեռնությամբ ստեղծել է «Վարդենիս» կամավորական ջոկատը: 1991-1993 թթ. ակտիվորեն մասնակցել է Վարդենիսի սահմաններում եւ Արցախում ծավալված պաշտպանական գործողություններին: Եղել է Ջոդի տարածքի հրամանատարը, իր ստեղծած «Վարդենիս» կամավորական ջոկատով մասնակցել է Վարդենիսի սահմանամերձ գյուղերի ինքնապաշտպանությանը /Ջարքենդ, Ազիզլու, Վերին Շորժա/: Ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ, Վերին Հոռաթաղ, Հաթերք, Սեյսուլան տարածքների ազատագրման պայքարին: 1993 թվականին մասնակցել է Քարվաճառի ազատագրման մարտական գործողություններին, 1994 թվականի հունվարի 2-ից Օմարի լեռնանցքի ազատագրմանը:

Գառնիկ Մուկուչի Խչեյանը Արցախի բնակչությանը մատակարարել է այլ կարգի ծառայություններ՝ իր կողմից ներդրումներ է կատարել այդ տարիներին Արցախի պաշտպանության օգնության ֆոնդին: Կազմակերպել է բարեգործական ակցիաներ՝ վերը նշված գյուղերի բնակիչներին մատակարարելով պարենամթերք:

Մասնակցել է հայկական բանակի կազմավորմանը. 1993 թվականին ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանի հրամանով նշանակվել է Ջոդի ուղեկալի պետ, 1994 թվականին ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հրամանով նշանակվել է զորամասի անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալ: Պարգեւատրվել է՝ «Վազգեն Սարգսյան» կրծքանշանով, «Մարտական ծառայություն» մեդալով եւ մի շարք հուշամեդալներով:

Իր բարոյական ու մարդասիրական դրսեւորումների շնորհիվ Գառնիկ Մուկուչի Խչեյանը մեծ հարգանք եւ հեղինակություն է վայելել երկրապահ կամավորականների, Վարդենիսի, Արցախի հասարակության շրջանում:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

## ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԻ ՀԱՐԿԵՐ ԹԱՔՑՆԵԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչություն տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Կոտայքի մարզում Վերին Պտղնի համայնքի Երեւան-Սեւան մայրուղու 1 եւ Երեւան քաղաքի Գյուրջյան 10/2 հասցեներում բենզալցակայան շահագործող ընկերությունն առանց համապատասխան փաստաթղթավորման՝ ձեռք է բերում վառելիք ու առանց հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններ տրամադրելու եւ այդ գործարքները հարկային հաշվառման մեջ արտացոլելու՝ վաճառում է սպառողներին:

Կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունն իրեն վերապահված գործառույթների շրջանակում հարկային իրավախախտումների կանխման ու բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքներում մշակել, ձեռնարկել եւ իրականացրել է համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Այսպես, նախապես ճշտվել են ընկերության գործունեության հասցեները, վառելիքի բաշխիչ աշտարակների քանակները, վառելիքի պահեստավորման տարաների գտնվելու վայրերը, ինչպես նաեւ գրասենյակային տարածքների հասցեները, միաժամանակ իրականացվել է նաեւ արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառում:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակում ձեռք բերված տվյալների համալիր վերլուծությունների եւ ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ ընկերությունը 2023-2026 թվականներին առանց համապատասխան փաստաթղթերի ձեռք է բերել եւ իրացրել տարբեր տեսակի՝ շուրջ 1,6 մլրդ. դրամի հեղուկ վառելիքներ: Այդ նպատակով, բենզալցակայանի իրական շրջանառության զգալի մասը չի փաստաթղթավորվել, մասնավորապես վաճառված բենզինի արժեքները չեն մուտքագրվել հսկիչ-դրամարկղային մեքենաներ եւ չեն տպվել ՀԴՄ կտրոններ: Այս ամենի հետեւանքով հարկային մարմին ներկայացված հաշվարկներում մտցվել են խեղաթյուրված տվյալներ: Արդյունքում պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 500 մլն դրամի վնաս: Դեպքի առթիվ հաղորդում է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչությունը շարունակում է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել ոչ միայն կատարված հանցագործությունների բացահայտման, այլեւ դրանք կանխելու ուղղությամբ, միաժամանակ հորդորում է տնտեսվարող սուբյեկտներին հայտարարագրել իրական իրացման շրջանառությունները:

● *Հայաստանի Հանրապետությունում հուլիսի 3-ից 6-ը գրանցվել է 2 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության:*

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

# ԿՏԵՂԱԲԱՇԽԻ ԴՈԼԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Ս.թ. հուլիսի 9-ից մինչեւ դեկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում ԲԲԸ Հայէկոնոմբանկը կտեղաբաշխի իր կողմից թողարկված դոլարային պարտատոմսերի հերթական տրանշը:

5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով դրամային պարտատոմսերը ներառում են 50,000 հատ անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմս՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

Պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը 5% է, արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս, իսկ պարտատոմսերի մարման ամսաթիվը՝ 09.07.2029թ.:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման Հայաստանի ֆոնդային բորսայում եւ գնանշվելու են շուկա ստեղծողի (Marketmaker) կողմից:

Պարտատոմսերի ծրագրային ազդագրի (գրանցված ՀՀ ԿԲ-ի կողմից) եւ թողարկման վերջնական պայմանների էլեկտրոնային տարբերակները կարելի է ներբեռնել Բանկի կայքէջից, իսկ թղթային տարբերակը հնարավոր է ձեռք բերել՝ այցելելով Բանկի գլխամասային գրասենյակ (հասցե՝ ք. Երեւան, Պապ թագավորի 23/1):

Պարտատոմսերը կարող են ձեռք բերել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք AEB MOBILE հավելվածի կամ AEB ONLINE համակարգի միջոցով, ինչպես նաեւ կարող են մոտենալ Հայէկոնոմբանկի Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ՝ ներկայացնելով սահմանված կարգով լրացված Պարտատոմսերի ձեռքբերման հայտ/հայտեր:

Հիշեցնենք, որ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակված պարտատոմսերի դիմաց մինչեւ 2027թ. դեկտեմբերի 31-ը վճարվող արժեկտրոնային եկամուտները ենթակա չեն հարկման:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորվում են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

86 86 | aeb.am

*Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)*

ՖԱՍԹ ԲՐԵՆԴ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԵՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

**«Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի ֆինանսաբանկային ուղղությունը նշանակալի քայլ է կատարում դեպի միջազգային շուկա. խմբի կազմում գործող Ֆասթ բրենդը պատշաճաղես ստացել է Մալթայի ֆինանսական ծառայությունների մարմնի EMI լիցենզիան:**

Սա Հայաստանի ֆինանսաբանկային ոլորտում առաջին նախադեպն է, որն ընկերությանը հնարավորություն է տալիս ֆինանսական եւ վճարային ծառայություններ մատուցել Եվրամիության բոլոր երկրներում:

«Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի նախագահ եւ Ֆասթ Բանկի խորհրդի նախագահ Վահե Բադալյանն ասել է. «Սա մեր առաջին քայլն է՝դեպի Եվրամիության շուկայում բանկային լիցենզիա ստանալու գործընթացը: Ստանալով Մալթայի ֆինանսական ծառայությունների մարմնի կողմից տրամադրված EMI լիցենզիան՝ մենք հնարավորություն ենք ունենում Ֆասթ բրենդի ներքո ընդլայնելու մեր գործունեությունը Եվրամիության 27 երկրներում, որն ունի շուրջ 450 մլն բնակչություն: Այն տնտեսապես զարգացած միջավայր է, որտեղ բնակչության գերակշիռ մասն օգտվում է ինտերնետից եւ օնլայն բանկային ծառայություններից: Սա մեզ հնարավորություն է տալիս զարգացնելու թվային բանկինգը գրեթե անսահմանափակ մասշտաբով: Այս ձեռքբերումը «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի ներքո գործող Ֆասթ ֆինանսաբանկային ուղղության համար առանձնահատուկ կարեւորություն ունի»:

Եվրամիության տարածքում ֆինանսական կազմակերպություն ունենալու նպատակը խմբի օրակարգում է եղել տարիներ շարունակ: Դեռ մի քանի տարի առաջ սկսված բարդ գործընթացը հաջողությամբ պսակվեց այս տարվա ամռանը: «Fast Shift Limited» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Վարդան Խաչատրյանը նշել է. «Ստացված EMI լիցենզիան լայն հնարավորություններ է բացում Fintech ոլորտում՝ ներառելով բանկային հաշիվների տրամադրում (ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց), քարտերի թողարկում, ինչպես նաեւ սթեյբլքոինների եւ այլ նորարարական վճարային ծառայությունների մատուցում: Այս պահին ընկերությունն անցել է գործնական փուլի. կատարվում են մեծ ներդրումներ, ձեւավորվում է անհրաժեշտ տեխնիկական ենթակառուցվածքը եւ ներգրավվում են բարձրակարգ մարդկային ռեսուրսներ: Ջուգահեռաբար ակտիվ բանակցություններ են ընթանում համաշխարհային SWIFT համակարգին, եվրոպական SEPA Instant-ին, ինչպես նաեւ միջազգային քարտային սխեմաներին, այդ թվում՝ Visa-ին, անմիջականորեն միանալու համար»:

Այս նախագիծը ոչ միայն ամրապնդում է Ֆասթ բրենդի դիրքերը համաշխարհային ֆինանսական քարտեզի վրա, այլեւ դառնում է ռազմավարական կամուրջ Հայաստանի եւ Եվրոպական տնտեսական տարածաշրջանի միջեւ՝ հայկական բիզնեսի համար բացելով ուղիղ հասանելիություն աշխարհի խոշորագույն տնտեսություններից մեկին:

*Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից*

# ՅՈՒՆԻԲԱՆԿՆ ԱՋԱԿՑԵՑ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ

**Յունիբանկը՝ որպես Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) բարերար, իր աջակցությունը ցուցաբերեց համալսարանի 93-րդ սերնդի շրջանավարտների ավարտական հանդիսավոր երեկոյի կազմակերպմանը: Տոնական միջոցառման հատուկ հյուրն էր հայտնի երգիչ Սոսո Պավլիաշվիլին:**

Շնորհավորելով շրջանավարտներին՝ ՀԱՊՀ ռեկտոր Գոռ Վարդանյանը նշեց, որ նրանք կերտելու են Պոլիտեխնիկի 93-րդ սերնդի պատմությունը՝ իրենց գործունեությամբ, արժեքներով եւ մասնագիտական հաջողություններով նոր ուժ հաղորդելով համալսարանի շրջանավարտների մեծ համայնքին: Նրա խոսքով՝ այսուհետ համալսարանը նրանց դիտարկում է ոչ միայն որպես շրջանավարտների, այլեւ որպես գործընկերների, որոնց հետ շարունակելու է քննարկել համալսարանի զարգացման, ինչպես նաեւ Հայաստանի տեխնոլոգիական եւ գիտակրթական առաջընթացին վերաբերող հարցերը:

Ռեկտորը երախտագիտություն հայտնեց նաեւ համալսարանի բարերարներին եւ գործընկերներին՝ կրթական նախաձեռնություններին, ուսանողներին եւ պրոֆեսորադասախոսական կազմին ցուցաբերած շարունակական աջակցության համար:

Յունիբանկի Վարչության նախագահ, ՀԱՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ Մեսրոպ Հակոբյանը նշեց, որ Յունիբանկը, լինելով համալսարանի բարերարներից մեկը, շարունակելու է իր երկարամյա եւ արդյունավետ համագործակցությունը Պոլիտեխնիկի հետ՝աջակցելով համալսարանի զարգացմանը, կրթական նախաձեռնություններին եւ երիտասարդ մասնագետների կայացմանը: «Յունիբանկը կարեւորում է կրթության եւ բիզնեսի միջեւ համագործակցության զարգացումը՝ աջակցելով այնպիսի ծրագրերի իրականացմանը, որոնք նպաստում են գիտելիքահենք տնտեսության զարգացմանը, մրցունակ մասնագետների պատրաստմանը եւ երկրի տեխնոլոգիական ներուժի ամրապնդմանը», - ընդգծեց Մեսրոպ Հակոբյանը:

Յունիբանկի եւ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի միջեւ համագործակցության հուշագիրը ստորագրվել է 2021 թվականին: Այն ուղղված է կրթական ծրագրերի կատարելագործմանը եւ դրանց գործնական կիրառմանը բիզնես միջավայրում: Համագործակցության շրջանակում Յունիբանկի աջակցությամբ ՀԱՊՀ-ում ստեղծվել եւ գործում է նաեւ «Թվային բանկային գործ» լաբորատորիան, որտեղ իրականացվում են ժամանակակից կրթական ծրագրեր՝ բանկային ոլորտի համար բարձրակարգ մասնագետների պատրաստման նպատակով:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

OPTA

# Ո՞Ր ՀԱՎԱՔԱԿԱՆՆ Է ՀԱՂԹՈՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՎԱԿՆՈՐԴԸ

**Բրիտանական վերլուծական Opta ընկերության սուպերհամակարգիչը 2026 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնության բառորդ եզրափակիչների մեկնարկից առաջ Արգենտինայի հավաքականին այլեւս չի ներառում մրցաշարի հաղթողի գլխավոր երեք հավակնորդների թվում: Այդ մասին հաղորդվում է ընկերության պաշտոնական կայքում:**

Արգենտինայի հավաքականը ներկայում զբաղեցնում է չորրորդ տեղը: Նրա՝ աշխարհի չեմպիոն դառնալու հավանականությունը գնահատվում է 15,9%: Մինչեւ 1/8 եզրափակիչները Արգենտինան երկրորդ տեղում էր, իսկ հաղթելու հավանականությունը գնահատվում էր 16,32%:

Մրցաշարի գլխավոր ֆավորիտը շարունակում է մնալ Ֆրանսիայի հավաքականը՝ 27,62% հաղթելու հավանականությամբ: Ընդ որում, նախորդ փուլից առաջ այդ ցուցանիշը կազմում էր 28,89%: Ֆրանսիայի գլխավոր մրցակիցը, ըստ սուպերհամակարգչի, Իսպանիայի հավաքականն է, որի հաղթելու հավանականությունը զգալիորեն աճել է՝ 12,96%-ից հասնելով 21,54%-ի:

Լավագույն եռյակը եզրափակում է Անգլիայի հավաքականը՝ 17,06% հաղթելու հավանականությամբ: Անգլիացիների շանսերը նախորդ փուլի համեմատ ավելի քան կրկնապատկվել են. մինչ այդ դրանք գնահատվում էին 8,14%:

Սուպերհամակարգչի կանխատեսմամբ՝ աշխարհի առաջնությունում հաղթելու ամենաքիչ հավանականությունն ունեն Նորվեգիայի (6,50%), Մարոկկոյի (4,04%), Բելգիայի (3,86%) եւ Շվեյցարիայի (3,46%) հավաքականները: Այս թիմերից յուրաքանչյուրի համար աշխարհի չեմպիոնի տիտղոսը կարող է դառնալ պատմության մեջ առաջինը:

2026 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնությունն անցկացվում է ԱՄՆ-ում, Կանադայում եւ Մեքսիկայում: Առաջին անգամ մրցաշարին մասնակցում են 48 հավաքականներ: Առաջնությունն ավարտվելու է հուլիսի 19-ին:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

## ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԲՈՒՀԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

**Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի է ունեցել հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը, որը վարել է ԿԳՄՍ նախարար, խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը: Նիստին մասնակցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, խորհրդի այլ անդամներ:**

Օրակարգի առաջին հարցով ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը հանդես է եկել համալսարանի զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագրի եւ դրա իրականացման գործողությունների պլանի վերաբերյալ զեկույցով: Նա ներկայացրել է ծրագրի հիմնական դրույթները եւ առաջնահերթ ուղղությունները՝ ընդգծելով, որ նոր ռազմավարական ծրագիրը մշակվել է նախորդ ժամանակահատվածի ձեռքբերումների եւ բացթողումների համադրմամբ՝ նպատակ ունենալով ապահովել բուհի շարունակական զարգացումը, բարձրացնել կառավարման արդյունավետությունը, ամրապնդել կրթության որակը, խթանել գիտական գործունեությունը, ընդլայնել միջազգային համագործակցությունը:

Լիլիթ Մկրտչյանի խոսքով՝ ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքներին ներգրավվել են համալսարանի ակադեմիական եւ վարչական ստորաբաժանումները, ֆակուլտետներն ու ամբիոնները, ոլորտային փորձագետներ: Ռազմավարական ծրագրի աշխատանքներում կարեւորվել է նաեւ միջազգային խորհրդատվությունը, մասնավորապես՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL) Կրթության ինստիտուտի (IOE) հետ համագործակցությունը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ համալսարանի զարգացման ռազմավարությունը պետք է ունենա հստակ թիրախներ եւ արդյունքային ցուցանիշներ՝ շեշտելով, որ ռազմավարական ծրագրի կարեւորագույն նպատակներից մեկը պետք է լինի ուսանողների թվի աճը: Նա նաեւ կարեւորել է մասնագիտությունների համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին, կառավարման արդյունավետության շարունակական բարելավումը եւ համալսարանում հետազոտական գործունեության զարգացումը: Ըստ նախարարի՝ անհրաժեշտ է նախատեսել կրթական հետազոտությունների կենտրոնի ձեւավորում, որը կդառնա ինչպես համալսարանի, այնպես էլ կրթական համակարգի կարեւոր ռեսուրսներից մեկը:

Քննարկման ընթացքում հոգաբարձուների խորհրդի անդամները ներկայացրել են իրենց դիտարկումներն ու կարծիքները առաջարկվող փաստաթղթի վերաբերյալ՝ անդրադառնալով առանձին դրույթների կատարելագործման կարեւորությանը:

Հոգաբարձուների խորհուրդն առաջարկել է համալսարանի 2026-2030 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը վերջնականացնել՝ միջազգային գործընկերների կարծիքները ստանալուց եւ ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները ներառելուց հետո, որից հետո այն կներկայացվի հաստատման:

Հաջորդիվ քննարկվել է համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված կառուցվածքային փոփոխությունների նախաձեռնությունը: Նշվել է, որ ֆակուլտետներում նախատեսվում է ստեղծել գրասենյակներ, որոնցում կաշխատեն ամբիոնների եւ դեկանատների մասնագետները: Մասնավորապես, յուրաքանչյուր կրթական ծրագրի համար կնշանակվեն ծրագրերի պատասխանատուներ, որոնք կզբաղվեն բովանդակային եւ կազմակերպչական համակարգմամբ՝ հստակ սահմանված գործառույթներով:

Հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվել են նաեւ համալսարանում իրականացվող կազմակերպչական գործընթացները, աշխատակիցների վերապատրաստման, մասնագիտական զարգացման եւ թվային հմտությունների ծրագրերը՝ կարեւորելով էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանը, հաշվետվողականությանը եւ տվյալահեն որոշումների կայացմանը վերաբերող հարցերը:

Հոգաբարձուների խորհուրդը քննարկել է նաեւ բուհի գործունեությանն առնչվող մի շարք այլ հարցեր:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՆՈՐ ԱԿՈՒՄԲ ՈՒՆԻ

Մադրիդի «Ռեալի» նախկին գլխավոր մարզիչ Ալվարո Արբելոան նշանակվել է Լոնդոնի «Ֆուլհեմի» գլխավոր մարզիչ, գրում է armsport-ը:

Անգլիական ակումբի մամուլի ծառայությունը տեղեկացնում է, որ 43-ամյա իսպանացի մասնագետի հետ կնքվել է եռամյա պայմանագիր՝ մինչեւ 2029 թվականի ամառ: Այս պաշտոնում նա փոխարինել է Մարկու Սիլվային, որը հրաժարվել էր երկարաձգել պայմանագիրը եւ տեղափոխվել է Լիսաբոնի «Բենֆիկա»:

«Ինձ համար մեծ պատիվ է նոր փուլ սկսել Լոնդոնի ամենահին ակումբում: Ես մեծ պատասխանատվություն եմ զգում եւ անչափ շնորհակալ եմ ղեկավարությանը՝ Պրեմիեր լիգայում ինձ «Ֆուլհեմը» վստահելու համար: Անհամբերությամբ սպասում եմ «Քրեյվեն Քոթեջի» մթնոլորտը զգալուն եւ թիմի հետ հաջորդ շաբաթ նախամրցաշրջանային պատրաստությունը սկսելուն: Վստահ եմ, որ մեզ անհավանական համատեղ ճամփորդություն է սպասվում»,- նշել է Արբելոան:

Հիշեցնենք, որ Արբելոան անցած մրցաշրջանի երկրորդ հատվածում էր գլխավորել «Ռեալը»՝ հունվարին այդ պաշտոնում փոխարինելով Խաբի Ալոնսոյին: Նրա գլխավորությամբ մադրիդցիները Լա լիգայում գրավեցին երկրորդ տեղը՝ չեմպիոնական մրցավազքում զիջելով «Բարսելոնային», ինչից հետո մարզիչը հեռացավ զբաղեցրած պաշտոնից: Նախքան հիմնական թիմը, նա մարզում էր Մադրիդի երիտասարդական կազմերն ու «Կաստիլիան»:

Հատկանշական է, որ Պրեմիեր լիգայի 2026/27 մրցաշրջանի հենց առաջին տուրում կկայանա նախկինում մադրիդյան ակումբը գլխավորած երկու մասնագետների դիմակայությունը: Օգոստոսի 24-ին «Ֆուլհեմը» կընդունի «Չելսիին», որն էլ վերջերս գլխավորել է Խաբի Ալոնսոն: Երկու մարզիչների համար էլ սա նորամուտի հանդիպում կլինի Անգլիայի առաջնությունում:

«Ալվարոն շատ հավակնոտ է: Նա արժեքավոր փորձ է կուտակել՝ աշխատելով լավագույն խաղացողների ու ակումբների հետ, յուրացրել է ժամանակակից ֆուտբոլի մեթոդները, եւ այդ գիտելիքներն անպայման օգուտ կբերեն մեզ»,- իր հերթին ընդգծել է լոնդոնյան ակումբի նախագահ Շահիդ Խանը:

Նշենք, որ Արբելոան Պրեմիեր լիգայում որպես ֆուտբոլիստ հանդես գալու փորձ ունի՝ 2007-ից 2009 թվականներին պաշտպանելով «Լիվերպուլի» գույները: Նախորդ մրցաշրջանի արդյունքներով «Ֆուլհեմը» ԱՊԼ-ում գրավել էր 11-րդ տեղը:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հուլիսի 12-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «ԿԱՐԱՊԻ ԼԻՃԸ» բալետը:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ո՞ր զինծառայողը չի կարող ընդգրկվել մարտական հերթապահության մեջ:**

*Գասպար Սիմոնյան, 66 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Համաձայն «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մարտական հերթապահության մեջ չի կարող ընդգրկվել այն զինծառայողը (բացառությամբ, եթե նա ցանկություն է հայտնել ընդգրկվելու մարտական հերթապահության մեջ, ինչպես նաեւ «Ես եմ» ծրագրի շահառու հանդիսացող զինծառայողների), որը.

1) հանդիսանում է 63 տարին լրացած կամ երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (եթե սահմանված չէ ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակում) ունեցող ծնողների (միայնակ ծնողի) միակ զավակը,

2) ունի ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում եւ այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաեւ ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր),

3) ամուսնացած է եւ ունի մեկ երեխա,

4) ծնողները մահացած են,

5) մեկ ծնողը մահացած է եւ այդ զինծառայողն ընտանիքի միակ զավակն է, կամ ընտանիքի մյուս զավակներն անչափահաս են, կամ ընտանիքի մյուս զավակները չափահաս են եւ ունեն հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անգործունակ:

**ՀՀ ՊՆ**

*Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Արդյո՞ք հանրային պաշտոն զբաղեցնող անձը կարող է պաշտոնավարման ընթացքում անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ իրականացնել այլ աշխատանք:**

*Արմինե Օհանյան, 36 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների համար սահմանված են պաշտոնին ներկայացվող որոշակի պահանջներ, որոնք թույլ են տալիս ապահովել պաշտոնական լիազորությունների՝ հավանական շահերի բախումից զերծ, արդյունավետ եւ անաչառ իրականացումը: «Հանրային ծառայության մասին» օրենքի տեսանկյունից հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որեւէ պաշտոն՝ առեւտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից: Սույն օրենքով հստակեցվում են նաեւ ձեռնարկատիրական գործունեությունը, գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հասկացությունները: Նշված պահանջների խախտումը նախատեսում է պատասխանատվության առավել խիստ միջոցը՝ պաշտոնական լիազորությունների դադարեցումը կամ զբաղեցրած պաշտոնից ազատումը:

***Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով***

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Էմանուել Մակրոնը առավոտյան մարզվում է Անկարայում:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| | Շիրակ | + 6 + 11<br>+ 22 + 27 |
| | Կոտայքի լեռներ | + 7 + 11<br>+ 22 + 26 |
| | Կոտայքի նախալեռներ | + 13 + 15<br>+ 27 + 30 |
| | Գեղարքունիք | + 7 + 12<br>+ 21 + 26 |
| | Լոռի | + 9 + 13<br>+ 23 + 27 |
| | Տավուշ | + 10 + 13<br>+ 24 + 27 |
| | Արագածոտնի լեռներ | + 6 + 10<br>+ 22 + 25 |
| | Արագածոտնի նախալեռներ | + 12 + 16<br>+ 26 + 31 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | + 15 + 18<br>+ 29 + 32 |
| | Արմավիր | + 15 + 18<br>+ 31 + 34 |
| | Վայոց ձորի լեռներ | + 8 + 11<br>+ 22 + 25 |
| | Վայոց ձորի նախալեռներ | + 15 + 18<br>+ 30 + 34 |
| | Սյունիքի լեռներ | + 7 + 11<br>+ 20 + 23 |
| | Սյունիքի նախալեռներ | + 12 + 15<br>+ 23 + 26 |
| | Սյունիքի հովիտներ | + 18 + 21<br>+ 30 + 34 |
| | Երեւան | + 15 + 17<br>+ 31 + 33 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **08.07.2026**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*